ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 81

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի դեկտեմբերի 09-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 6, 1.5քմ.
2) Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 27, 1.5քմ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. նոյեմբերի 08
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 82

2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի դեկտեմբերի 09-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների համար տեղամասային կենտրոն սահմանել Պտղնիի միջնակարգ դպրոցի շենքը (հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 2):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. նոյեմբերի 08
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 83

ԱՐԿԱԴՅԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 356.6 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արկադյա Ռաֆայելի Մելքումյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 49 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.05 հա հողամասից (կոդ 07-054-0212-0016) ավել օգտագործվող 0.03566 հա տարածքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագծից, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Արկադյա Ռաֆայելի Մելքումյանի կողմից փաստաթղթերում ամրագրված 0.05 հեկտարի փոխարեն Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 49 հասցեում փաստացի օգտագործվում է բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.08566 հա հողամաս:

Համաձայն «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արկադյա Ռաֆայելի Մելքումյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 49 հասցեի բնակավայրերի նշանակության 0.05 հա հողամասից ավել օգտագործվող 0.03566 հա հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Արկադյա Ռաֆայելի Մելքումյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 49 հասցե 07-054-0212-0016 կադաստրային ծածկագրով 0.08566 հա հողամասի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասը սահմանները որոշվում են Պտղնի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Մարատ Պետրոսյանը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. նոյեմբերի 15
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 84

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սուրեն Վահրամի Համբարձումյանի լիազորված անձ Վահրամ Պարույրի Համբարձումյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Սուրեն Վահրամի Համբարձումյանին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 1-ին թաղամաս թիվ 30 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0201-0034) 2004-2008 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները և պարիսպը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Սուրեն Վահրամի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 1-ին թաղամաս թիվ 30 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2004-2008 թվականներին ինքնակամ կառուցվել է 14.9 քմ մակերեսով շինություններ և 12.1 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սուրեն Վահրամի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 1-ին թաղամաս թիվ 30 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սուրեն Վահրամի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող 2004-2008 թվականներին կառուցված 14.9 քմ մակերեսով շինությունները և 12.1 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Սուրեն Վահրամի Համբարձումյանին 2004-2008 թվականներին կառուցված 14.9 քմ մակերեսով շինությունների և 12.1 քմ մակերեսով պարսպի համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 42120 (քառասուն երկու հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. նոյեմբերի 15
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 85

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Իոսիֆ Կարենի Հարությունյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ տեղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0219-0003) 1977-1985 թվականներին ինքնակամ կառուցված այգետնակը, լողավազանը, թոնրատունը և պարիսպը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Իոսիֆ Կարենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ տեղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1977-1985 թվականներին ինքնակամ կառուցվել է 178.94 քմ մակերեսով այգետնակ, 14.82 քմ մակերեսով լողավազան, 8.17 քմ մակերեսով թոնրատուն և 16.01 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն Հայստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իոսիֆ Կարենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ տեղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Իոսիֆ Կարենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 178.94 քմ մակերեսով այգետնակը, 14.82 քմ մակերեսով լողավազանը, 8.17 քմ մակերեսով թոնրատունը և 16.01 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. նոյեմբերի 19
գ.Պտղնի